

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայ և ռուս ժողովրդի հնօրյա կապերի պատմության նվիրված բազմաթիվ աշխատություններ են հրատարակվել հայ պատմաբանների նախաձեռնությամբ: Հայտնի է, որ լիբերալ հայ պատմաբաններն, ավելի հաճախ միակողմանի դիրքերից մոտենալով պատմական դեպքերին և վավերագրերին, ակնհայտ կերպով թերագնահատել են առաջավոր մտքի ներկայացուցիչների դերը: Դրանով էլ կարելի է բացատրել առանձնապես այն, որ անցյալում անհրաժեշտ հստակությամբ չի բացահայտվել ռևոլյուցիոն մտքի ներկայացուցիչների դերը: Միակողմանի այդօրինակ մոտեցմանը վերջ է տրվել միայն Սովետական իշխանության օրերին: Այսօր մենք ունենք բավական մեծ գրականություն՝ նվիրված առաջավոր ռուս մտածողների հայացքների ընդլայնմանը: Հրապարակվել են նաև Բելինսկու, Գերցենի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու և ուրիշ ականավոր գործիչների երկերի հայերեն թարգմանությունները: Ժամանակին լույս է տեսել նաև Վ. Պարսամյանի հատուկ ուսումնասիրությունը՝ «Գրիբոյեդովի և հայ-ռուսական հարաբերությունները»: Հրապարակվել են մի շարք հետազոտություններ Մաքսիմ Գորկու և հայ ժողովրդի (Գ. Հովնան), հայ-ռուսական գրական կապերի մասին (Նանումյան, Արեշյան, Գաբրիելյան, Գրիգորյան և այլք): Շեշտված աշխատությունների շարքին է պատկանում անշուշտ նաև ակադեմիկոս-պատմաբան Մ. Ներսիսյանի նոր հետազոտությունը, որը բովանդակալից ուսումնասիրություն լինելով հանդերձ, եզակի արժեք է ներկայացնում թե իր կառուցվածքով և թե հիմնական հատկանիշներով: Կարելի է վճռական կերպով ասել, որ այդ գործը առաջին անգամ հայ պատմագիտական գրականության մեջ բացահայտում է ռուս, «ազնվական ռևոլյուցիոններին» շատ ուրույն դերը հայ ազգային-ազատագրական շարժումների պատմության հարուստ առաջնությունում: Շատ դժվար է, իհարկե, մատենագրական հակիրճ ոեցենզիայի միջոցով, լիովին բացահայտել Ներսիսյանի նոր գործի արժեքը, սակայն ինչպես մեզ թվում է, նույնիսկ հակիրճ ոեցենզիան այսօր անտեղի չէր լինի: Անհրաժեշտ է, մեր կարծիքով, ամենից առաջ շեշտել այն, որ արձանագրելով նշանակալից բազմաթիվ նոր փաստական տվյալներ, Ներսիսյանը թելադրում է հայ պատմաբաններին նոր դիտակետից մոտենալ հայ և ռուս ժողովուրդների հարաբերությունների պատմության ուսումնասիրությանը, բացահայտել առաջին հերթին առաջավոր ռուս գործիչների ուրույն կապերը հայ ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների հետ: Ռուսական դեկաբրիստները «ազնվական ռևոլյուցիոններն» լինելով հանդերձ, ինչպես ժամանակին նշվել է ռուս պատմագրության մեջ, արթնացրել են դարավոր նիրհից ռուս ժողովրդին և հանդիսացել են ռևոլյուցիոն մտքի ներկայացուցիչներ:

Հավ են հայտնի Գերցենի իմաստալից խոսքերը և ապա «Գերցենի հիշատակին» նվիրված հանրահայտ ուսումնասիրության մեջ Լենինի կողմից տրո-

ված նշանակալից դիտողությունը: Հիշատակելով դեկարրիստների կտրվածությունը հայրենի ժողովրդից, լենինը միաժամանակ ընդգծել է նաև դեկարրիստների պատմական պրոգրեսիվ դերը ուսումնասիրական մտքի, պատմության մեջ: Ներսիսյանի բովանդակալից պատմական նոր ուսումնասիրությունը սկզբից մինչև վերջ խարսխված է լենինյան նշանակալից դրույթների վրա:

1.

Այդ աշխատության առաջին էջերում Ներսիսյանը հակիրճ կերպով կանոյ է առել կարևորագույն աղբյուրների վրա և ապա ականավոր ուսումնաբանների ջանքերով հրապարակված աշխատությունների վրա: Դադարիք չէ այն, որ դեկարրիստական շարժման բազմակողմանի և գիտական ուսումնասիրությունը իրականում մեծագույն թափ է ստացել միմիայն Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայից հետո: Բավական է հիշատակել այն, որ միայն Սովետական իշխանության օրերին են հրատարակվել «Դեկարրիստների ապստամբություն» վերնագիրը կրող արխիվային հարուստ ժողովածուների ստվարածավալ հատորները: Լույս են տեսել նաև ականավոր դեկարրիստների մեմուարների և նամակների նշանակալից նոր հրատարակությունները, որոնց կցված են թե պատմական-բանասիրական հատուկ նախաբաններ և թե մանրակրկիտ կոմենտարներ: Եզակի տեղ է գրավում սովետական նորագույն պատմագրության մեջ հայտնի պատմաբան Նեչկինայի երկհատոր ստվարածավալ աշխատասիրությունը: Մինևույն Նեչկինայի «Գրիբոյեդովը և դեկարրիստները» մեծածավալ հետազոտությունը ժամանակին բարձր է գնահատվել բանասերների և ուսմ. դրականության պատմաբանների կողմից: Վերջերս լույս է տեսել Պեստելի հայտնի «Ռուսական Պրավդայի» առաջին լիակատար գիտական հրատարակությունը: Դեկարրիստների թե էպիսոդներ և թե գործունեությանը նվիրված գրականությունը այնքան ստվար է, որ միշտ կարող է գրավել մատենագիրների առանձնահատուկ ուշադրությունը: Մեծագույն տոկոսն ունի հետազոտելով կարևորագույն աղբյուրները և հետազոտությունները, Ներսիսյանը կարողացել է համագին կերպով անհրաժեշտ ընտրություն կատարել, սխառմամբորել բազմազան փաստերը, հիշատակել ավելի նշանակալից այն վավերագրերը, որոնք բնութագրում են Հայաստանում կամ հայաբնակ վայրերում գործող որոշ դեկարրիստներին: Ժամանակին, ինչպես հայտնի է, Նիկոլայ Առաջինի համար պատրաստվել է հատուկ ալբոմներական ցանկ և հենց այդտեղ նշված էին այն դեկարրիստները, որոնք կապված են եղել կովկասյան զորամասերի հետ: Ներսիսյանը հիշատակում է բազմազան պատմական աշխատություններ: Նրա աշխատության մեջ արձանագրված են բազմաթիվ նոր փաստեր և նկարագրված են նշանակալից նոր դեպքեր, որոնք հիրավի շատ դիպուկ գծերով են նկարագրում կովկասյան զանազան վայրերում գործող դեկարրիստներին: Առանձին արժեք են ներկայացնում, փ միջի այլոց, այն էջերը, ուր նկարագրված են ուսմ. ժողովրդի ընդերքից ելած մարտիկների և ապա կովկասյան ժողովուրդների մարտական ջոկատների միասնական ռազմական ելույթներն ընդգնդ տաճկական դեսպոտիզմի: Նկարագրական առանձին հատվածների մեջ Ներսիսյանը կանգ է առնում մի շարք դեկարրիստների՝ Բևսուով և Լիբայրյանների, Կոնովնիցինների, Բուրցովի, Լեմանի, Վոլխովսկու, Միկլաշևսկու և այլ գործիչների կյանքի և գործունեության նշանակալից էջերի վրա: Պատկերավոր դետալներով աչքի են ընկնում ընդարձակ և բովանդակալից դրույթները՝ «Հանդիպումները Գրիբոյեդովի

և Պուշկինի հետ», «Ն. Ռաևսկու գործը», «Բարեկամությունը լեհ ուսուցչի ունեւներին հետ», որոնց մեջ ամփոփված առանձին փաստերը կարող են գրավել հայ լեզվագրողի առանձնահատուկ ուշադրությունը: Խնդիրը նրանում է, որ վերջին երկու հատվածների մեջ նկարագրված են մի կողմից դեկաբրիստների հայ ծանոթները և ապա մյուս կողմից էլ ուշագրավ կերպով բացահայտված են դեկաբրիստների դիրքորոշումը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ բնութագրող տվյալները:

Մեծ արժեք է ներկայացնում ամբողջ գրքի տեքստին կցված դեկաբրիստ Լաչինովի ուշագրավ հուշերի ուրույն ժողովածուն: Ժամանակին Լաչինովը եղել է Հայաստանի բնորոշ վայրերում և բավական պատկերավոր էջեր է նվիրել հայաբնակ վայրերի նկարագրությանը:

Անշուշտ նշանակալից գրական-պատմական այդ վավերագիրը, փնդպես հայտնի է, առաջին անգամ հրապարակել է ներսիսյանը: Սկզբնագրի հայերեն այն թարգմանությունը, որ կցված է «Դեկաբրիստները Հայաստանում» աշխատության տեքստին (էջ 313—385), չնայած որոշ կրճատումների, պետք է ասել, ավելի լիակատար հրատարակություն է: Ամբողջ այդ օրագիրը գրված է կենդանի և հյուսիսեղ ոճով: Կան բավական պատկերավոր էջեր և նշանակալից տողեր ժամանակակիցների մասին: Գունեղ են առանձնապես հայկական բնաշխարհի առանձին վայրերի մասին գծված բնանկարները: Դիտելով Արաքսի հարթավայրը, գեղատեսիլ լեռնաշղթայի տեսարանը, ապա բերդերի և տաճարների ավերակները, Լաչինովը մերթ րնդ մերթ կարծես տարվում է ուրույն ռոմանտիկական ապրումներով: Բնորոշ է այն, որ նա սիրով և հարգանքով տողորված թուրքիկ դիտողություններ է անում գեղակերտ հուշարձանները ստեղծագործող հայ ժողովրդի մասին: Պատմաբանի համար էլ Լաչինովի որոշ նկարագրական էջերը կարող են ուշագրավ լինել, քանի որ նա կանգ է առնում հետագայում անհետացած հուշարձանների նշանակալից հատկանիշների վրա: Օրինակ, Նոր Բալխի հյուսիսային կարագրությանը նվիրված դիտողություններից հետո, նա հիշատակում է լազմամթիվ «ավերակներ»... Բերդից ճանապարհը գնում է լեռնապարով, քարվանսարայի ավերակների կողքով, որն ուշադրության է արժանի իր շինվածքի ամրությամբ և արվեստով, մի բան, որ կարելի է ասել այստեղ հանդիպող լուրջ հնադարյան շենքերի մասին: Դարերը նրանց կողքով են թռել, և, վերջապես, ժամանակի կործանարար գերանդին հաղթանակում է: Անցյալ ժամանակների վկաներ, պատմեցեք, ո՞ր են ձեզ ստեղծող մարդիկ...» (էջ 367):

Լաչինովի պատկերավոր օրագրի առանձին էջերի համար ուրույն կոմենտարների գեր կարող են կատարել հնօրյա ռուս նկարիչների, առանձնապես 18-րդ դարի վերջի՝ Հայաստանի և Վրաստանի տեսարանները նկարող Իվանովի նման ներհուն նկարիչներ: Ուշագրավ կարելի է համարել Մաստարային նվիրած տողերը: «...Այնտեղ կա 830 տարի առաջ, Մեծ Հայաստանի գոյության ժամանակներում հիանալի կառուցված հնադարյան հայկական եկեղեցի, բայց նույնպես քայքայվող, ինչպես և քրիստոնյա եկեղեցիների մեծ մասը: Տաճարների աղքատությունը, եկեղեցու ծառայողների երկչոտությունը, նրանց ժամասացության մեջ ինչ որ մոայլությունը, խորհրդավորությունը հիշեցնում են քրիստոնյաներին հալածելու աղետալի դարաշրջանը...»: Լաչինովի այդ օրագիրը այնքան բնորոշ գրական-պատմական վավերագիր է, որ կարող էր

նաև առանձին հրատարակությամբ գրավել հայ ընթերցողների առանձնահատուկ ուշադրությունը: Եւ տրադիցիան, ուղեգրություններից տարրերովում է թե իր հյուսվածքով և թե ընդհանուր խնտոնացիայով: Ամենից ուշագրավն այն է, իհարկե, որ այդ «օրագիրը» ռուս առաջավոր գործչի, տաղանդավոր մտածողի ղեկաբրիստ-ռեդկուցիոնների մտորումները բացահայտող մի վավերագիր է...

Աշխատության հավելվածի մեջ ընթերցողների առանձին ուշադրությունը կարող են գրավել նաև «գաղտնի ընկերությունների» մասնակիցների և ապակովկասյան վայրերն աքսորված ղեկաբրիստների ցանկերը (էջ 386—429):

Աշխատության բուն տեքստային բաժնում, Ներսիսյանը ցիտում է միշտ կարևոր և հատկանշական քաղվածքներ թե՛ հնօրյա վավերագրերից և թե՛ ղեկաբրիստների գրություններից: Ամենից ուշագրավն այն է, որ ամբողջ աշխատության առանձին հատվածները կտրված չեն միմյանցից, թեև յուրաքանչյուր առանձին հատվածը շոշափում է հարցերի և պոթբեմների մի որոշ խումբ: Առաջին հատվածն, օրինակ, շատ ուրույն բովանդակություն ունի («Աքսոր ղեպի կովկաս»): Այստեղ Ներսիսյանը շեշտում է ու պարզաբանում շատ համոզիչ կերպով, որ իրականում կովկասյան աքսորավայրում ևս ղեկաբրիստները ցարական ղեսպոտիզմի համար եղել են անհանդուրժելի և ատելի գործիչներ: Բոլոր ղեկաբրիստ զինվորականները հետապնդվել են կառավարության կովկասյան համհարզների կողմից և միշտ համարվել «անբարեհույս» և «կասկածալոր» գործիչներ:

Շատ փաստալից են երկրորդ հատվածի էջերը: Ներսիսյանը հիշատակում է բազմաթիվ ու բազմազան տվյալներ: Նա հիշեցնում է, որ ակտիվ մասնակցությունը «Հայաստանը պարսկական լծից ազատագրելու գործում» ղեկաբրիստներին կապել է ճնշված ժողովուրդների և, առանձնապես, հայ ժողովրդի հետ ամուր բարեկամության կապերով: Արևելյան ֆեոդալների դեմ ուղղված ռազմական արշավանքները եղել են բռնակալ տեժերի դեմ ուղղված շարժումներ և մեծագույն ազդեցություն են թողել հայ ժողովրդի լայնագույն շերտերի վրա: Նույնպիսի բնույթ է ունեցել նաև ղեսպոտական Թուրքիայի դեմ ուղղված պատերազմը, որը դիտվել է 19-րդ դարի 20-ական թվականներին հայ աշխատավոր զանգվածների կողմից, որպես ազատագրական պատերազմ: Առանձին արժեք է ներկայացնում աշխատության մեջ, մեր կարծիքով, խններորդ հատվածը («Բարեկամություն լեհ ռեդկուցիոններին հետ»), որի հետ մի որոշ չափով կապված է կարծես նաև տասներորդ հատվածը...

Աշխատության ընդհանուր հյուսվածքի և ապա փաստական հիմնաշենքի առթիվ մենք կուղենայինք միայն մի դիտողություն անել: Մեր կարծիքով, Ներսիսյանը, ջանալով հիշատակել առաջին հերթին նորանոր տվյալներ և նորանոր վավերագրեր, կամ էլ ձգտելով սեղմել ղեպերի նկարագրության նվիրված շարադրությունը, միանգամայն զուր տեղը կանգ չի առել նորագույն ռուս պատմաբանների մի շարք նոր դիտողությունների և եզրահանգումների վրա: Խնդիրը նրանումն է, որ ղեկաբրիստական շարժման ընդարձակ պատմության նվիրված ռուսերեն բազմազան նոր աշխատությունները առանձնապես հայ ընթերցողների լայն շրջաններին քիչ են հայտնի կամ էլ ամենևին հայտնի չեն: Գաղտնիք չէ մասնավորապես այն, որ ղեկաբրիստները ցարական քննիչներին տրված փրենց առաջին ցուցումների մեջ բավական մանրակրկիտ կերպով բացահայտել են իրենց հասարակական և պատմական հայացքները: Հայտնի «Դեկաբրիստների ապստամբություն» վերնագիրն ունեցող սովոր

հատորների մեջ հիշատակվել են շատ ուշագրավ դեպքեր և փաստեր: Դեկարրիստների մտահայեցության և առանձնապես բարձր դադափարների և հումանիստական մտորումների ճշգրիտ մեկնաբանության համար, հիշված հայտարարություններն ու նման վավերագրերը մեծ նշանակություն ունեն: Այնքան էլ անտեղի չէր լինի, որ մեզանում դեկարրիստներին նվիրված առաջին ամփոփ, բովանդակալից ու ղխական հետազոտության մեջ բացահայտվեր այն դադափարը, որ դեկարրիստների շատ ուրույն մոտեցումը ունակցիոն ուժերին, ցարական դեսպոտիզմին՝ սերտորեն շախկապված է եղել նրանց առաջավոր և պրոգրեսիվ մտահայեցության հետ: Բազանովի ջանքերով հրատարակված հայտնի աշխատությունը, օրինակ, տիրասպառչության խիզախ կալանավոր Ռանսկու մասին, ցույց է տալիս, որ ռուսական զորամասերում հնօրյա «զինվորական» դպրոցները կրել են շատ ուրույն բնույթի նորագույն վավերագրերը նոր ասպեկտով նկարագրում են դեկարրիստներին և ավելի ցայտուն կերպով ցուցադրում նրանց ազատասիրական հայացքները, բացասական դիրքորոշումը արևմտյան պետությունների սև միության, ակներև հարգանքը հին աշխարհի դեմ ըմբոստացող ազատագրական ուժերի նկատմամբ, սերն ու հարգանքը Ռիեգոյի նման ըմբոստ գործիչների նկատմամբ:

Ներկայումս կարելի է գրեթե հաստատված համարել, որ դեկարրիստների ուրույն մոտեցումը սլավոն ժողովուրդների ազատագրական շարժումներին և գրական ղրքը հույն ժողովրդի ազատագրական պատերազմին, ինչպես նաև Բայրոնի, Գրիբոյեզովի, Պուշկինի նման ազատախոհ գրողների ներկատմամբ կապակցված է եղել ամենասերտ կերպով դեկարրիստների ընդհանուր մտահայեցության հետ: Շատ դժվար է ճշգրիտ կերպով մեկնաբանել կամ լուսաբանել կովկասյան վայրերը մեկնող Պուշկինի դիրքորոշումը, առանձնապես հայ ժողովրդի նկատմամբ, առանց վերոհիշյալ կարևորագույն հանգամանքների հաշվառման: Պուշկինը մանրապատում գիտողություններ չի արել հայ ժողովրդի մասին, բայց նա եղել է հայ ժողովրդի անկեղծ և իսկական բարեկամը իր ամբողջ մտահայեցությամբ, որպես ռուս ժողովրդի մեծ բանաստեղծ և որպես սլավոն ժողովուրդների և հույն ժողովրդի ազատագրական պատերազմի շատ ջերմ գաղափարախոս: Միևնույն կարելի կլիներ ասել նաև այն դեկարրիստների մասին, որոնք անմիջական կապեր չեն ունեցել 20—30-ական թվականներին հայ ժողովրդի առաջավոր գործիչների հետ, բայց իրենց աշխատանքով, իրենց գործունեությամբ, իրական ձեռնարկներով և պրակտիկայով պայքար են մղել հայ ժողովրդի ազատագրման համար՝ ընդդեմ արևելյան դեսպոտների: Այսօր տակավին չկան Արովյանի և անցյալի առաջավոր տիրիչ գործիչների կապերը դեկարրիստների հետ բացահայտող որոշակի վավերագրեր: Սակայն ինչպես մեզ թվում է, անցյալում եղել են անպայման և՛ ծանոթություն, և՛ ուրույն կապեր, որոնք ստեղծվել են հենց ընդհանուր մտահայեցության շնորհիվ և ընդհանուր աշխատանքների պրոցեսում: Ահա հենց այդ պատճառով մենք հիմնավորված ենք համարում շեշտված հարցերին ներսիսյանի կողմից առաջադրված պատասխանը:

Այնուամենայնիվ նորից մեզ թվում է, որ հենց այդ պատասխանը ավելի համոզիչ դարձնելու համար ցանկալի կլիներ աշխատության երկրորդ հրատարակության մեջ հանգամանորեն և ավելի մանրակրկիտ կերպով կանգ առնել թե սովետական պատմաբանների հիմնական դրույթների և թե մանավանդ դեկարրիստների բարդ և բազմաբան հայեցության, նույնիսկ հակասական

Լեզերումների, անգամ ուրույն էվոլյուցիայի վրա: Ներսիսյանի աշխատության մեջ շատ և շատ կարևոր վավերագրեր են հիշատակվում, նշանակալից գեալրեր և փաստեր են նշվում, վերջապես արձանագրվում են կարևոր նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնք անցյալում առանձնապես հայ պատմաբանների կողմից անուշագրության էին մատնվել: Այդ ամենն ակնհայտ է և ինչ այդ ամենն էլ թելադրում է յուրաքանչյուր բարեխիղճ ընթերցողի նշել աշխատության ակներև և բացառիկ գիտական արժեքը:

Լավ է նաև այն, որ այդ եզակի արժեք ունեցող գործը լավ է տպագրված և նկարագրով: Լավ են թողթը, շրիֆտը, ծավալը, ամբողջ «ձևավորումը»: Աշխատության մեջ զետեղված նկարների առթիվ միայն մի դիտողություն կարելի կլինի անել: Բացի անվանացուցակից, որի նշանակությունն ակներև է, մեր կարծիքով, անհրաժեշտ էր կցել նկարների առթիվ հատուկ ծանոթագրություններ: Անհրաժեշտ էր, նշել, թե Պուշկինի հանրահայտ պորտրեն որ նկարչի գործն է: Այդպիսի ծանոթություն անհրաժեշտ էր անել նաև բոլոր մյուս պորտրենների առթիվ: Հին գրավյուրների կամ լիտոգրաֆիաների առթիվ անհրաժեշտ էր նշել, թե երբ են առաջին անգամ հրատարակվել գրավյուրները կամ լիտոգրաֆիաները և ուսերեն որ հրատարակությունից են ընդօրինակվել հայերեն հրատարակության մեջ զետեղված նկարները: Երբեք չի կարելի մոռանալ, որ Նոյսյան նկարները կարևորագույն պատմական վավերագրեր են:

2

Մեր կարծիքով, ամբողջ աշխատության կոմպոզիցիան լավ է մտածված: Ընթերցողը տեսնում է այն գիծն ու կապը, որ հեղինակը ջանացել է ցուցադրել իր աշխատության մեջ: Կարող է գուցե տարակուսանքներ ստեղծել միայն այն, որ Ներսիսյանը, խոսելով «Հայաստանի» մասին, իրականում կանգ է առել մերձարևելյան վայրերում գործող ղեկավարիստների վրա, նա անշուշտ նկատի է ունեցել կովկասյան և մերձարևելյան վայրերի հայաբնակ վայրերը: Միթե ավելի նպատակահարմար չէր լինի խոսել պարզապես հայ ժողովրդի մասին և ընտրել «Դեկաբրիստները Հայաստանում» վերնագրի փոխարեն, «Դեկաբրիստները և հայ ժողովուրդը»: Դեկաբրիստները, իհարկե, եղել են «աղնվական ռեվոլյուցիոներներ»: Լենինի հայտնի դիտողությունը «Դեկաբրիստների հիշատակին» նվիրված ուսումնասիրության մեջ շատ թրոշակի իմաստ ունի: Սակայն և այնպես ընթերցողը երբեք չի կարող անուշագրության մատնել այն, որ դեկաբրիստները «աղնվական ռեվոլյուցիոներներ» լինելով հանդերձ, թե կովկասյան և թե մանավանդ բոլոր հայաբնակ վայրերում հիմնական իրենց ուշագրությունը ուղղել են շատ ուրոշակի մի ուղղության: Պատերազմը նրանց համար եղել է ասիական դեսպոտիզմի դեմ ուղղված պատերազմ և կովկասյան ժողովուրդների ազատագրական ապստամբությունների հետ կապակցված պատերազմ: Իրենց շրջագայության ընթացքում նրանք տեսել են առաջին հերթին հայ ժողովրդին: Այդ բանում համոզվելու համար բավական է ծանոթանալ դեկաբրիստների նամակներին: Անհրաժեշտ է միայն ուշագրության քննել հայաբնակ վայրերում կործող դեկաբրիստների ապրումները, մտորումները, ռազմական սխրագործությունները: Չի սխալվում Ներսիսյանը, երբ կանգ է առնում, ի միջի այլոց, դեկաբրիստների սխրագործությունների առթիվ Պասկևիչի կողմից արված դիտողության վրա: Պասկևիչի

կարծիքով, ղեկավարիստները իրր թև նպատակ են ունեցել «քավել» իրենց «մեղքերը»։ Ընդդեմում ալն, որ Պասկեիչի ալգօրինակ «Հալորդումը» պետք է համարել «անհիմն ու մտացածին» (էջ 145), Ներսիսյանը նկարագրում է մի շարք ղեկավարիստների հերավի անվհեր և խիզախ ռազմական ձեռնարկները (էջ 146—148 և ալն)։ Նա նշում է առանձնապես ալն, որ զորամասերի լեյքփարդիայի «Հավաքական գնդի» թե շարքային և թե սպայական կազմր իրօք հերոսաբար մարտնչել և պատմական մեծ դեր է խաղացել Երևանը, էջմիածինը, Սարգարալաղը և ամբողջ Արևելյան Հայաստանը պարսկական խաների ու լևկերի լծից ազատագրելու գործում (էջ 148)։ Հատկանշական պետք է համարել ալն, որ ալդ «Հավաքական գնդի» ղինվորները, ինչպես Ներսիսյանն է նշում, «շարքային ղինվորները ղեկավարիստների ապստամբության մասնակիցներ էին...»։ Աշխատության մեջ նշված է, որ տակավին ղեկավարիստների ապստամբությունից առաջ, դեպի կովկասյան վայրերն էին աքսորվել Սեմյոնովական գնդի 1820 թ. ապստամբության մասնակիցները։ Աշխատության մեջ ամենից ուշադրավ նորույթը հենց ալդ շարքային ղինվորների ուրույն նշանակությանը բնդդումն է։ Իր գրքի մի ամբողջ հատված Ներսիսյանը նվիրել է հենց ալդ ղինվորների ղինվորական ապստամբությունների և առանձնապես ղեկավարիստների ապստամբության շարքային մասնակիցների դերի բնութագրմանը («Դեկաբրիստների ապստամբության շարքային մասնակիցները Հայաստանում», էջ 132—161)։ Աշխատության մեջ հիշատակված են կարևոր փաստեր և թվական տեղեկություններ։ Բավական է միայն հատվածի մեջ բերված տվյալները համեմատել պատմաբան Պարսամյանի վերջերս հրատարակված գրքուկի մեջ հիշատակված կրտուրուկ հայտարարության հետ, որպեսզի ականերև դառնա սեղմ, բայց սկզբից մինչև վերջ ռեալ փաստերով հագեցված, հիշված հատվածի կարևորագույն նշանակությունը։ Ներսիսյանը հիշեցնում է, որ կովկասյան վայրերն էին «ուղարկվել» ոչ միայն քիչ առաջ հիշված «Հավաքական գնդի» ղինվորները, ալ նաև մոսկովյան ու գրենադերական գնդերի և ապա գվարդիական էկիպաժի ալն «ստորին աստիճանավորները», որոնք «իրենց ակտիվ գործունեության համար «ներում» չէին ստացել և բանտարկված էին Վիրորդի և ԿեքսՆոլմի բերդերում»։ Իե որքան «վտանգավոր հանցագործներ» էին համարվում ալդ աքսորականները, ցույց է տալիս հետևյալ փաստը։ Ցաբական բռնակալության հատուկ կարգադրությամբ ալդ «աքսորվածներին» ուղեկցում է հեծյալ պահակախումբ։ Ալդ հատուկ պահակախմբի ղինվորները պետք է մեծագույն ուշադրությամբ հետևեին աքսորականների բոլոր քայլերին։ Ուղեկցման համար նշանակված ղինվորները և ենթասպաները սպառազինված էին։ Յուրաքանչյուր 10 կամ 12 մարդու համար նշանակվել էր, որպես պահակ, մեկ հոգի (էջ 149)։ Չոկատները ալնպես էին ուղարկվել, որ միմյանց չհանդիպեն։ Վաղորդք մշակվել էր «ուղևորության» ամբողջ մարշրուտը։ Աստորախանի պարետը ստացել էր հատուկ հրահանգ՝ «Կայսր թագավորին հաճելի է, որպեսզի ալդ ջոկատը ճանապարհին չհանդիպի Հավաքական գվարդիական գնդին...»։ Ցարը ու նրա գնեերալները «վախենում էին ռեույուցիտն ղինվորներից ու նավաստիներից և ալդ պատճառով թույլ չէին տալիս, որ նրանք հանդիպեին և շրփում ունենալին միմյանց հետ...» (էջ 151)։ Գեներալ Դիրիշը, ինչպես հայտնի է, 1826-ի մարտի 7-ին գրել է.

¹ ՏՎ՝ն Վ. Պարսամյան, Դեկաբրիստները Հայաստանում, էջ 46:

«Կովկասյան գիծ հասնելուն պես, պետք է բաժանել... կորպուսի այն դրն-գերի վրա, որոնց առավելապես զերադասելի է օգտագործել՝ լեռնականներին դենքի գործադրությամբ զսպելու համար...» (էջ 151)։

Եթե «ազնվական ուղևորներները» կովկասյան վայրերում հանձին հայ ժողովրդի տեսնում էին սլավոն և ընդհանրապես քրիստոնյա ժողովրդի այն ներկայացուցիչներին, որոնք տառապում էին հույների նման արևելյան դեսպոտիզմի ճնշման ներքո, շարքային զինվորների համար հայ ժողովուրդը մոտիկ, սիրելի, հարազատ էր նաև որպես եղբայրակից ռանչպար ժողովուրդ։

Եթե «ազնվական ուղևորներները» խիզախորեն մարտնչում էին արևելյան դեսպոտիզմի դեմ, տոգորված հայրենասիրական մտորումներով, ապա շարքային նախկին ղեկաբրիստ-զինվորների համար այդ պատերազմը նկատելի չափով պետք է կրեր նաև ուրույն սոցիալական պատերազմի բնույթ։ Այդ կարևոր հանգամանքը անցյալում լիբերալ պատմագրության պատգամներին կառչած պատմաբանների կողմից, ինչպես հայտնի է, որոշակի կերպով չի նշվել։ Այդ փաստը Ներսիսյանի աշխատության մեջ ընդգծված է կտրուկ կերպով, որը անշուշտ թելադրում է առանձին ուշագրությամբ մոտենալ շարքային ղեկաբրիստների մասին հիշատակված էջերին։

Ամբողջ աշխատությունը այնքան հարուստ բովանդակություն ունի և այնքան լեցուն է փաստական տվյալներով, որ միամիտ ընթերցողի համար դժվարին մի գործ է դառնում փաստերի իսկական արժեքավորումը, Շատ լավ է այն, որ Ներսիսյանը մեծ տեղ է հատկացնում առանձին ղեկաբրիստների գրություններից քաղված դիտողություններին։ Հայաստանի բնաշխարհը, գեղեցիկ բնանկարը, ժողովրդի դեմքը, կենցաղն ու սովորույթները, անգամ պատմական ավանդությունները, ամեն ինչ գրավում է ղեկաբրիստների ուշադրությունը։ «...Ամեն ինչ,—գրում է Բեստուժևը իր պարսկական տպավորությունների մասին,—թե ընթերցումը և թե մարդիկ մոռալ են»։ Հակառակ այդ միջին պատկերին, Բեստուժևը ժողովրդի մասին խոսում է ինտիմ սիրով՝ «բնակիչները ցնցոտիների մեջ են, մտացածին կամ իսկական, որովհետև Ասիայում միայն ծայրահեղ աղքատությունն է փրկում իշխանությունների ազահությունից...» (էջ 261)։ Դատափետելով արևելյան բռնակալների վարքագիծը, Բեստուժևը վճռական կերպով դատափետում է նաև ցարական կառավարության ներկայացուցիչներին՝ «...Ս. Գլինկան,—գրում է նա 1832-ին Կ. Պոլեոյին,—հանձն է առնում ամեն ինչ, նույնիսկ Հայաստանի պատմությունը գրելը։ Բայց եթե իմանային ինչպես կատարվեց հայերի դադթը Ադրեջանից, կսարսափեին անգամ քարերը։ Լադարեին հանձնարարված էր Անդրկովկաս կանչել երեսուն հազար հայեր, գտնվեցին մինչև իննսուն հազար ցանկացողներ, և կոմսը թույլ տվեց կանչել աճյալ, ինչքան կարող է։ Ոսկե սարեր խոստացան, և նրանք շարժվեցին... Նկան և չգտան հացի հատիկ, գլուխ զննելու տեղ, ճյուղ՝ կյանք պահպանելու համար։ Ոչինչ չէր պատրաստվել։ Նրանց տվեցին կորստաբեր կլիմա, անբերրի հող և դրա հետ աննշան դրամական օգնություն, այն էլ մի մասին։ Նրանցից կեսը կոտորվեց, քառորդը ցրվեց, վերջին քառորդը իր թշվառ գոյությունն է քարշ տալիս օտարության մեջ։ Իսկ Գլինկան, ես կարծում եմ, շոայտում է լացականչություններ՝ «...Ահա՛ մեր դադութները. նայեցեք, նրանք, Ախալցխան մեր դրոշի տակ են...»։ Շատ նշանակալից է այն, որ այդ տողերը գրում է ռուս ականավոր ղեկաբրիստ գործիչներից մեկը։ Հայրենասեր լինելով հանդերձ, նա քննադատում է ցարիզմի դադութային քաղաքա-

կանությունը և մերկացնում բարձր ցարական բյուրոկրատիայի ներկայացուցիչների ռեակցիոն դեմքեր: Նման տողերի մեջ նշմարվում է Ֆաև հայ ժողովրդի կյանքին և ապրումներին սիրով ու հարգանքով հետևող առաջավոր և պրոգրեսիվ գործչի դեմքը:

Աշխատության յուրաքանչյուր առանձին հատվածին ներսիսյանը կցել է ուշագրավ ծանոթագրություններ, հավելվածներ: Այդտեղ նշված են բավական նշանակալից մատենագրական տեղեկություններ և բերված են քաղվածքներ, որոնք լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում:

Գրքի մեջ քիչ տեղ չեն գրավում դիպուկ քաղվածքները: Բոլոր նման քաղվածքները ընտրված են հմտորեն և ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ: Չնայած նույնիսկ նրան, որ ամբողջ աշխատության շարադրությունը խիստ սեղմ է, ընթերցողին չեն հոգնեցնում թե առանձին դեպքերի և թե բազմազան դետալների նկարագրության նվիրված էջերը: Ամենից կարևորն այն է, որ ընթերցողը տեսնում է դեկաբրիստ գործիչներին՝ ցարական տրագիդիան սպասավորներից բաժանող կտրուկ սահմանագիծ և նկատում է, որ արևելյան պատերազմին մասնակցող դեկաբրիստները մոտենցել են պատերազմին յուրահատուկ դիրքերից: Դեկաբրիստների ակտիվ մասնակցությունը արևելյան դեսպոտիզմի դեմ մղված կռիվներին ավելի ևս տրոշակի կերպով է բացահայտել կովկասյան պատերազմների ազատագրական բնույթը: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պատերազմը ընդդեմ արևելյան դեսպոտիզմի բավական սերտ կերպով շաղկապվել է արևելյան բարբարոսական պետությունների դեմ արշավող ռուսական պետության ռազմական արշավանքի հետ: Դեկաբրիստների մասնակցությունն այդ արշավանքներին հաղորդել է ակնհայտորեն ազատագրական պատերազմի բնույթ:

Անհրաժեշտ է ընդգծել մի ուրիշ հանգամանք: Ներսիսյանը, բացահայտելով շարքային ռուս զինվորների դերը և առանձնապես աքսորական շարքային դեկաբրիստների գերը, արձանագրում է կարևորագույն արժեք ունեցող մի երևույթ: Խնդիրը նրանումն է, որ շարքային ռուս զինվորների մասնակցությունը չէր կարող անուշադրության մատնվել հայ ժողովրդի աշխատավոր զանգվածների կողմից: Կասկածից դուրս է, որ շարքային դեկաբրիստների կողմից պետք է ռազմական բախումների ժամանակ շատ ավելի կտրուկ կերպով բացահայտվեր սոցիալական ատելությունը կովկասյան ֆեոդալների նկատմամբ: Քանի որ հայ գյուղացի ժողովուրդը գտնվում էր ծանրագույն պայմաններում, ինքնին արդեն հասկանալի է, որ շարքային դեկաբրիստների սերն ու համակրանքը ռանչպար հայ ժողովրդի նկատմամբ պետք է դրսևորվեր ավելի ցայտուն կերպով: Հասարակ «սալդատ» խոսքն անգամ հայ ժողովրդի լեքսիկոնի մեջ ժամանակին ստացել էր ինտիմ բնույթ: Պետք է միշտ հիշել այն էլ, որ ցարական զորամասերի զինվորները ճորտ-գյուղացիներ էին, որոնք չէին կարող հարգանքով մոտենալ իրենց կալվածատեր-հրամանատարներին: Ռուս շարքային բոլոր զինվորների համար անհանդուրժելի ու թշնամի տվեր պիտի հանդիսանային Կովկասում ֆեոդալական կարգերը պաշտպանող ուժերը: Դա կասկածից դուրս է: Ինչ խոսք, որ միասնական հայրենական պատերազմը արևելյան դեսպոտիզմի դեմ, ռազմական ամենօրյա եղբայրակցությունը, ընդհանուր մարտերը ընդհանուր թշնամու դեմ և հաճախ ճորտատիրական հայրենի միության բռնակալ-ճորտատերերին նմանող բեկերի, աղալարների, կնյազների ու մելիքների դեմ կարող էր միայն ամրացնել հայ և ռուս զինվորների, հայ և ռուս

պյուզաբի ռազմիկների Լիբյայությունը կովկասյան պատերազմների օրերին: Ես գտնում եմ, որ Ներսիսյանի նոր աշխատության մեծագույն արժանիքներից մեկը ահա հենց այդ սոցիալական մոմենտի լացահայտումն ու դրսևորումն է: Կտրուկ կերպով ընդգծելով ղեկաբրիստների դերն ու նշանակությունը, ծանրանալով նրանց շատ ուրույն ազատախոհ հայեցողության և հումանիստական մտորումների վրա, նա հիշեցնում է ավելորդ անգամ և համոզիչ կերպով, որ ոռոսական, անգամ ցարական հնօրյա բանակը 19-րդ դարի քսանական-երեսունական թվականներին նկատելի չափով զանազանվում էր իր հիմնական հատկանիշներով արևմտյան պետությունների գաղութային տրադիցիոն բանակներից: Ռուսական բանակի մեջ շնորհիվ ղեկաբրիստների մասնակցության հայրենասիրական գաղափարախոսությունը շատ սերտ կերպով էր կապակցված ազատագրական մտայնության հետ, այն մտայնության, որը իր հիմնական սլաքով ուղղված էր տխրահռչակ «Սրբազան դաշինքի» սև ջահակիրների դեմ: Մյուս կողմից շնորհիվ ոռոսական բանակի ուրույն սոցիալական կազմի և շնորհիվ հայ և ոռոս գեղջուկ-ռանչպար մարտիկների միասնական արշավանքների ընդդեմ ասիական դեսպոտիզմի և արևելյան-կովկասյան ֆեոդալների՝ արտասովոր ուժ պիտի ստանար հայ-ոռոս ժողովուրդների բարեկամությունը: Այլ խոսքով այս անգամ դա չէր կարող լինել հայ ժողովրդի սոցիալական վերնաշերտի և ոռոս ժողովրդին շահագործող լոռնակալ ուժի «բարեկամություն» կամ հայ և ոռոս ժողովուրդների միմիայն մեծատունների-նոտարիների «բարեկամություն», այլ սոցիալական ընդհանուր լուծը կրող և շահագործողներին հավասար ատելությամբ վերաբերվող ռանչպար ոռոս և հայ ժողովուրդների ամրակուռ բարեկամություն:

Ներսիսյանի աշխատությունը հիշեցնում է նորից և նորից, որ արքայական ղեկաբրիստները շատ կարևոր պատմական դեր են կատարել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պատերազմի ընթացքում ամենից առաջ, որպես ազատախոհ մտածողներ և ցարական դեսպոտիզմի կողմից հալածվող հումանիստ դործիքներ: Դեկաբրիստները լիովին գիտակցում էին, որ կովկասյան պատերազմների ընթացքում վարում են ազատագրական պատերազմ:

Շեշտված կարևոր փաստերը, մեր կարծիքով, պետք է այսուհետև ավելի կտրուկ կերպով արձանագրվեն և ժողովրդականացվեն: Հայ ազատագրված ժողովուրդը արդեն կառուցել է ոռոս ժողովրդի մշակույթի ականավոր երկու ներկայացուցիչների՝ Պուշկինի և Գրիբոյեդովի թանկագին հիշատակին նվիրված մի հուշարձան: Գուցե անտեղի չէր լինի այսօր քննարկման դնել նույն Հայաստանում դործող և հայ ժողովրդի ազատագրման օժանդակող դեկաբրիստների նվիրական հիշատակին նվիրված մի երկրորդ հուշարձան: Մեզ թվում է, որ կարելի կլիներ հենց Հաղթանակի կամուրջի մոտ հատուկ օբելիսկի վրա մակագրել այն ղեկաբրիստների ազգանունները, որոնք հեռու իրենց հայրենիքից, անցյալի դաժանագույն օրերին հայ զինվորների հետ միասին հերոսական պատերազմ են մղել ընդդեմ արևելյան դեսպոտիզմի՝ հանուն հայ ժողովրդի ազատագրման...

Այս տողերով կարելի կլինի ավարտել Ներսիսյանի արժեքավոր գրքի քննարկման նվիրված մեր հակիրճ մատենագրական ակնարկը:

ԱՐՏ. ԿԱՐԻՆՅԱՆ